

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԹԵՀՐԱՆ

Նորին Արքայական մեծութեան Շահնշահի Իրանի Ահմեդին

Երջանիկ եմ համարում ինձ, Տէր Աստուած, շնորհաւորել Ձեզ Նովրուզի օրը, Էջմիածնի համայն միաբանութեամբս և իմ ժողովրդով աղօթել առ Ամենակարողն Աստուած շնորհելու Ձեզ առողջ և բարեբաստիկ կեանք ի փառս և յառաջադիմութիւն ամբողջ Իրանի և յերջանկութիւն Ձեր հպատակաց։

9 Մարտի 1910 թ.
Ս. Էջմիածին

Մատթէոս Կաթողիկոս
ամենայն Հայոց

ԷՋՄԻԱԾԻՆ

Նորին Սրբութեան Մատթէոս Կաթուղիկոսի եւ Ծայրագոյն Պատրիարքի ամենայն Հայոց

Ձափազանց ղգացուած բարեմաղթութեանց և շնոր-

հաւորութեանց առթիւ, խնդրում եմ Ձերդ Սրբութիւնից փոխարէնն ընդունելու իմ խորին անկեղծ շնորհակալութիւնները։

Ցանուն Նորին Կայսերական մեծութեան Շահի՝

11 Մարտի 1910 թ.
Թեհրան

խնամակալ
Ագիդոլ Մոլք

Հայրապետական տնօրէնութիւններ.

Կոնդակ Վրաստանի Հայոց Տ. Թեմական Առաջնորդի անունով, որով թոյլ տրուեց արտօնել Քուլթայիսցի Յովհաննէս Զուրաբեանին, որ նուիրաբերել է տեղական եկեղեցու զանգակատան շինութեան օգտին 3000 ռ., թաղուել իւր մահից յետոյ նոյն եկեղեցու գաւթում։ Փետրվ. 19. թ. 380.

— Նոյն Առաջնորդի անունով, որով թոյլ տրուեց Մայրապետ Եփրոսինէ Աբամելիքեանի ծախքով նորոգել կուսանաց անապատի վանքը և բարերարին թաղել իւր մահից յետոյ նոյն վանքի հիւսիսային դրան սանդուխի կամարի տակ։ 19 փետրվ. թ. 381.

— Տ. Բագրատ վարդապետ Վարդազարեանի անունով, որով կարգուեց Նորին Վեհափառութեան Դիւանապետ։ 23 փետրվ. թ. 382.

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց Տ. Երուանդ վարդապետ Տ. Մինասեանին արձակել Հոգևոր կոչումից իւր խնդրի համաձայն։ 23 փետրվ. թ. 384.

— Թիւրքիոյ Հայոց Ամեն. Պատրիարքի անունով, որով յանձնարարուեց ամերիկայի թեմի Հայոց Առաջնորդութեան համար ընտրելիների եռանուն ցանկ ուղարկել։ 24 փետրվ. թ. 419։

— Մայր Աթոռի Կենտ. Ուսումն. Յանձնաժողովի անունով, որով ընդունուեց Պ. Մանուկ Աբեղեանի հրաժարականը և թոյլ տրուեց Յանձնաժողովի զբաղմունքների նիւթը հրատարակել «Արարատ» ամսագրում։ 24 փետրվ. թ. 420։